ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի ելույթը «ՀՊՏՀ շրջանավարտ -2016» միջոցառմանը

Հայաստանի Հանրապետության մեծարգո վարչապետ, պարոն Աբրահամյան,
Հարգարժան պարոն նախարար,
Հարգելի հյուրեր, ներկաներ,
Սիրելի ուսանողներ

Ավանդույթի ուժով յուրաքանչյուր տարի այս շրջանում մենք հավաքվում ենք՝ հանդիսավոր արարողությամբ հաջողություն մաղթելու ևս մեկ սերնդի, որը մասնագիտական մկրտություն է ստացել մեր համալսարանում, այս պատերի ներքո, որոնք, համոզված եմ, այնքան հարազատ են դարձել ձեզ: Այսօր տոն է ոչ միայն ձեզ համար, սիրելի շրջանավարտներ, այլև մեզ՝ կրթության գործի կազմակերպիչներիս ու պատասխանատուներիս համար:

Մեր համալսարանը յուրաքանչյուր տարի բակալավրիատում և մագիստրատուրայում մեծ թվով շրջանավարտներ է թողարկում, ճանապարհում մասնագիտական աշխատանքի ասպարեզ ու սրտի թրթիռով հետևում նրանց կայացմանն ու հաջողությանը: Ուսանողի կրթությանը նպատակաուղղված հետևողական ու անմնացորդ ջանքերից հետո էլ համալսարանը շարունակում է նախանձախնդիր լինել նրանց առաջընթացի հարցում ու անհրաժեշտության պարագայում հասնել ու սատարել:

Սիրելի շրջանավարտնե՛ր,

2015-2016 ուսումնական տարին մեր համալսարանի համար հաջող ավարտ է նշանավորում: Ինչպես վկայում է ամփոփիչ ատեստավորման գործընթացը, որում ձեր գիտելիքները և գիտահետազոտական

կարողությունները ներկայացրեցիք համախմբված ու ցայտուն, ձեր առջև կարող են մեծ հեռանկարներ բացվել: Դուք, իրավամբ, ունակ եք ձեր ուսերին կրելու և՛ հայրենական տնտեսագիտության առաջխաղացման, և՛ տնտեսության զարգացման առաքելությունը՝ արժանի սերնդափոխություն ապահովելով մեր համալսարանի գիտնական-մանկավարժներին, պետական պաշտոնյաներին, հաջողակ ձեռներեցներին:

Սիրելի շրջանավարտնե՛ր,

գիտելիքը կայուն ու հարատև արժեք է, ուստի դուք չպետք է բավարարվեք ձեռք բերածով, կրթության շարունակականությունը պետք է դառնա ձեր ինքնահաստատման հիմնաքարը ու առաջխաղացման կարևոր խթանը: Ես լիահույս եմ՝ մեր սպասելիքները դուք արդարացնելու եք: Այնուհանդերձ, համալսարանի ղեկավարության և անձամբ ինձ համար չափազանց կարևոր է, որ մեր շրջանավարտները մասնագիտական հատկանիշների կողքին ու նախևառաջ լինեն ինքնահաստատ ու ազնիվ մարդ-քաղաքացի, հայրենասեր հայ:

Դուք այն տարիքում եք, երբ կառուցվում է նաև ձեր անձնական երջանկությունը. գտնում եք ձեր կեսին, ստեղծում ընտանիք՝ դրանով ևս մասնակից դառնալով մեր պետականության կայացմանը: Ցանկանում եմ, որ ձեր անձնական կյանքը լինի ներդաշնակ՝ լի սիրով, հարգանքով ու փոխըմբռնմամբ:

Կրկին ու կրկին շնորհավորում եմ ձեզ, մաղթում նորանոր ձեռքբերումներ և հաջողություն բոլոր նախաձեռնություններում:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր,

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր